



Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Գիտակրթական
միջազգային կենտրոնի տնօրեն
Ա. Սարգսյան



Հաշվետվություն

2017թ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի

Ներգնա և արտազնա շարժունություն

- 2017թ. հունվարի 23-25-ին, փետրվարի 14-16-ին, 28-ին և մարտի 2-ին Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի (Institut Recherche en Informatique de Toulouse, France) դասախոսները ոլորտի մի քանի արդիական թեմաների շուրջ անցկացրեցին սեմինարներ և բաց դասախոսություններ: /Ընդհանուր թիվը՝ 6 ՊԿ/
- ERASMUS+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում հայկական պատվիրակությունը՝ կազմված ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական և ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի հետազոտական կազմերից, այցելեց Ֆրանսիայի Փոլ Սաբատիեի (Թուլուզ 3) համալսարան և ֆրանսիացի գործընկերների հետ միասին քննարկեց մագիստրատուրայի ուսանողների կրթական գործընթացի ընթացիկ կարգավիճակը և բարելավման գործողությունները: /Ընդհանուր թիվը՝ 6 հոգի, որից 3-ը ՊԴ կազմ, 2-ը՝ ՀԿ, 1-ը՝ ՎԿ/

- 2017թ. սեպտեմբերին իր այցի շրջանակներում Տուշայի համալսարանի արտաքին կապերի բաժնի պետ Կառլո Կոնտարդոն անցկացրեց վերապատրաստում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ համապատասխան ամբիոնների վարիչների, ամբիոնների միջազգայնացման պատասխատուների և վարչական անձնակազմի համար: /1 ՎԿ/
- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» մասնագիտությամբ երկրորդ կուրսի 2 ուսանող մեկ կիսամյակ ուսանում են Ֆրանսիայի Փոլ Սաբատիեի (Տուլուզ 3) համալսարանում Էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում:
- Էրազմուս+ կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ և Տուշայի համալսարանի միջև իրականացվող Erasmus+ KA107 շարժունության ծրագրով 2017թ. մայիսի 22-ից ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պատվիրակությունը այցելեց Տուշայի համալսարան (Իտալիա): 2017թ. մայիսի 25-ին Տուշայի համալսարանի ռեկտորատում հանդիսավորությամբ նշվեց հայկական օրը: /Ընդհանուր թիվը՝ 5 հոգի, որից 4-ը ՊԴ կազմ, 1-ը՝ ՎԿ/
- 2017թ. հոկտեմբերի 2-ից 5ը Էրազմուս+ կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակներում Տուշայի համալսարանից ժամանած դասախոսները մի շարք արդիական թեմաներով դասախոսություններ և պրակտիկ խմբային քննարկումներ անցկացրեցին՝ եվրոպական առաջավոր փորձի փոխանցման և վերապատրաստման նպատակով: 2017թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն ընդունեց Հայաստանում Իտալիայի դեսպան Ջովաննի Ռիչչոլլիին և Իտալիայի Տուշայի համալսարանի պրոֆեսորադասախոսական պատվիրակությանը: /Ընդհանուր թիվը՝ 5 հոգի, որից 4-ը ՊԴ կազմ, 1-ը՝ ՎԿ/

ԳԱՑ ցուցանիշ 6.1. Արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների թիվը

	2012	2013	2014	2015	2016	2017
Պայմանագրերի թիվը	8	10	13	14	18	25
Գործուղումների թիվը ըստ գործընկերների	4	2	12	1	6	11

ԳԱՑ ցուցանիշ 6.2 Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից

